ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

12-ը օգոստոսի 2025թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ ջերմորեն շնորհավորում եմ բոլոր երիտասարդներին, որոնք առանձնահատուկ տեղ և նշանակալից դեր ունեն հասարակության մեջ:

Մեր երիտասարդներն իրենց բնորոշ հայրենասիրությամբ, աշխատասիրությամբ ու նպատակասլացությամբ գնահատելի ներդրում ունեն ազգային արժեհամակարգի պահպանման հարցում, երկրի պաշտպանության և զարգացման նվիրյալ գործում:

Առանձնահատուկ շնորհավորում եմ Աբովյան համայնքի երիտասարդներին, որոնք ամենատարբեր ոլորտներում իրենց ակտիվությամբ ու տաղանդով գրանցում են հաջողություններ և պատվով ներկայացնում մեր համայնքը: Մեծապես կարևորելով երիտասարդների գիտելիքներն ու ներուժը՝ առանձնահատուկ ուշադրություն եմ դարձնում համայնքի զարգացման գործում, համայնքապետարանի աշխատակազմում և համայնքային ենթակայության կազմակերպություններում բանիմաց ու աշխատասեր երիտասարդների ներգրավվածությանը:

Երիտասարդներին առնչվող հարցերն ու խնդիրները մշտապես պիտի լինեն ուշադրության կենտրոնում. արագ փոփոխվող ժամանակակից աշխարհում համատեղ ուժերով պիտի ձգտենք ստեղծել երիտասարդության համար գրավիչ միջավայր և ապահովել կրթական նորարարություններին ու տեխնոլոգիական առաջընթացին համարժեք պայմաններ:

Սիրելի՛ երիտասարդներ.

Կրկին շնորհավորելով ձեզ նվիրված տոնական օրվա առիթով, մաղթում եմ անսպառ եռանդ, անկոտրում կամք, հաջողություններ բոլոր նախաձեռնություններում, վերելքներ ուսման մեջ և աշխատանքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ